Երկրորդ ընթերցում

Կ-724-27.11.2023-ՏՀ-011

(Լրամշակված նախագիծ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթեր՝ հարկային մարմնի կողմից իրականացվող վարչարարության շրջանակներում ինչպես թղթային եղանակով, այնպես էլ էլեկտրոնային համակարգի միջոցով ընդունվող Օրենսգրքով կամ օրենքով նախատեսված փաստաթղթեր, ինչպես նաեւ հարկային ստուգումների եւ ուսումնասիրությունների շրջանակներում հարկային մարմնի կողմից կազմվող՝ Օրենսգրքով նախատեսված փաստաթղթեր (հանձնարարագրեր, ակտերի եւ արձանագրությունների նախագծեր, ակտեր, արձանագրություններ, որոշումներ, հրամաններ).»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել 36.1-ին հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 36.1 Պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի ծանուցումը*

1.Հարկային մարմնի կողմից պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը հարկ վճարողներին ծանուցվում են էլեկտրոնային եղանակով՝ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրման միջոցով, որը հավաստվում է էլեկտրոնային կառավարման համակարգի կողմից: Պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը համարվում են հարկ վճարողին հանձնված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում նշված փաստաթղթերը տեղադրելու օրվանից եւ ուժի մեջ են մտնում հարկ վճարողին հանձնված համարվելու օրվան հաջորդող օրվանից:

2.Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում պարտադիր ծանուցման ենթակա այն փաստաթղթերի նկատմամբ, որոնց ծանուցման հետ կապված հարաբերությունները կարգավորված են Օրենսգրքով:
»:

Հոդված 3. Օրենսգրքի 398-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5. Հարկային մարմնում վարվող՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով չվճարված հարկային պարտավորությունների առաջացման դեպքում, եթե չվճարված հարկային պարտավորության չափը գերազանցում է 200 հազար դրամը կամ չվճարված հարկային պարտավորության առաջացման օրվանից հետո անցել է երկու ամսից ավելի ժամանակ

(բացառությամբ ստուգման կամ այլ վարչական ակտերով հարկային պարտավորություններ առաջադրված լինելու դեպքերի) 200 հազար դրամը գերազանցող պարտավորությունների դեպքում՝ չվճարված պարտավորությունների առաջացման օրը, իսկ մինչեւ 200 հազար դրամ պարտավորությունների դեպքում՝ նշված չվճարված պարտավորության առաջացման օրվանից հետո երկու ամիսը լրանալու օրը հարկ վճարողին չվճարված հարկային պարտավորությունների եւ սույն մասի 2-րդ եւ 3-րդ պարբերություններով սահմանված հարկային մարմնի կողմից իրականացման ենթակա գործողությունների մասին Օրենսգրքով սահմանված կարգով ուղարկվում է հիշեցում եւ առաջարկվում է հիշեցումն ուժի մեջ մտնելուց հետո 7 օրացուցային օրվա ընթացքում իր լսված լինելու իրավունքի ապահովման նպատակով առկայության դեպքում հարկային մարմին ներկայացնել գրավոր առարկություններ:

Սույն մասի 1-ին պարբերությամբ նախատեսված 7 օրացուցային օրվա ժամկետին հաջորդող աշխատանքային օրվանից հետո չկատարված հարկային պարտավորությունը չդադարելու կամ հարկ վճարողի կողմից ներկայացված առարկությունները չընդունելու վերաբերյալ պատճառաբանված եզրակացության կայացման դեպքում հարկային մարմնի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից ընդունվում է չվճարված հարկային պարտավորությունները գանձելու եւ չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ որոշում: Որոշումը կայացման օրը Օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում է հարկ վճարողին: Ներկայացված առարկությունները հարկային մարմնի կողմից ընդունվելու դեպքում վարույթը համարվում է կարճված, ինչի մասին Օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում է հարկ վճարողը:

Սույն մասով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելու օրը ուղարկվում է Հայաստանի Հանրապետության առեւտրային բանկերին, շարժական կամ անշարժ գույքի հաշվառում կամ գույքային իրավունքների գրանցում իրականացնող համապատասխան լիազոր մարմիններին եւ անձանց:

Սույն մասի իմաստով չվճարված հարկային պարտավորությունների առաջացման օր է համարվում Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հարկային պարտավորության կատարման վերջնաժամկետի հաջորդ օրը, եթե այդ օրվա դրությամբ հարկային պարտավորությունը կատարված չէ:»:

2) 5.1-ին մասը ուժը կորցրած ճանաչել.

3) 5.2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5.2. Օրենքով հարկեր վճարելու պարտականություն ունեցող, օրենքով սահմանված հարկային հաշվարկ չներկայացրած եւ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ չունեցող ֆիզիկական անձ հարկ վճարողների չվճարված հարկային պարտավորությունների գանձումն իրականացվում է «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով: Վարույթի շրջանակներում փաստաթղթերը հարկ վճարողներին ծանուցվում են փոստային կապի միջոցով՝ հանձնման մասին ծանուցմամբ հարկային մարմնում առկա տեղեկություններում ժամանակագրական կարգով վերջին հաշվառման հասցեով: Փոստային կապի միջոցով փաստաթղթերը հարկ վճարողին ուղարկելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, հանձնման մասին հետադարձ ծանուցում չստանալու դեպքում հարկային մարմինը նշված փաստաթղթերի իրազեկումն իրականացնում է Հայաստանի

Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով, եւ փաստաթղթերն ուժի մեջ են մտնում կայքում տեղադրելու օրվան հաջորդող 5-րդ օրվանից: Չկատարված պարտավորությունները գանձելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հարկային մարմինը Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկում է չկատարված հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:».

4) 6-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված հարկային պարտավորությունները սույն մասով սահմանված ժամկետում չվճարվելու օրվան հաջորդող 7-րդ օրացուցային օրը հարկային մարմնի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից ընդունվում է չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ որոշում: Որոշումը կայացման օրը Օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում է հարկ վճարողին:

Սույն մասով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելու օրը ուղարկվում է Հայաստանի Հանրապետության առեւտրային բանկերին, շարժական կամ անշարժ գույքի հաշվառում կամ գույքային իրավունքների գրանցում իրականացնող համապատասխան լիազոր մարմիններին եւ անձանց»:

Հոդված 4. Օրենսգրքի 429 հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«1. Գույքի արգելանքը չվճարված հարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված՝ հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Գույքի արգելանքը կիրառվում է հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի (այսուհետ՝ սույն բաժնի իմաստով ՝գույք) տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի՝ հարկային պարտավորությունների չափով սահմանափակման միջոցով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենսգրքի 431-րդ հոդվածի

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.Օրենսգրքի 398-րդ հոդվածով սահմանված դեպքերում չվճարված հարկային պարտավորությունները գանձելու եւ (կամ) չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ որոշման մեջ նշվում են որոշում կայացնող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, տարին, ամիսը, ամսաթիվը, հարկ վճարողի անունը, ազգանունը (ՀԾՀ-ն, անձը հաստատող փաստաթղթի տվյալները), կազմակերպության դեպքում՝ լրիվ անվանումը,

հարկ վճարողի ՀՎՀՀ-ն՝ առկայության դեպքում, չկատարված հարկային պարտավորության չափը եւ որոշում կայացնելու իրավական հիմքերը:»:

2) 2-7-րդ մասերը, 8-րդ մասի 2-րդ նախադասությունը, 9-րդ, 10-րդ եւ 12-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

3) 11-րդ մասում «Սույն հոդվածով սահմանված» բառերը փոխարինել «Չվճարված հարկային պարտավորության գումարը 2 միլիոն եւ ավելի կազմելու դեպքում կիրառված » բառերով:

4) Լրացնել 13-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«13.Հարկ վճարողի գույքի վրա արգելանք կիրառելուց հետո 30-օրյա ժամկետում հարկային պարտավորությունները չդադարելու դեպքում հարկային մարմինը չվճարված հարկային պարտավորությունները գանձելու եւ (կամ) չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ որոշումը եւ չկատարված պարտավորության չափի վերաբերյալ տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով ներկայացնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն)՝ չկատարված պարտավորությունները «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով հարկադիր կատարելու նպատակով: Հարկային մարմնի կողմից Ծառայություն է ներկայացվում հարկ վճարողի անունը, ազգանունը (ՀԾՀ-ն, անձը հաստատող փաստաթղթի տվյալները), կազմակերպության դեպքում՝ լրիվ անվանումը, հարկ վճարողի ՀՎՀՀ-ն՝ առկայության դեպքում, արգելադրված գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների չափի կամ դրանց բացակայության վերաբերյալ տեղեկատվություն: Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հարկային մարմնի կողմից կիրառված արգելանքի որոշումը Ծառայություն է ներկայացվում անբողոքարկելի դարձած ստուգման կամ այլ վարչական ակտերի հետ միաժամանակ: Հարկային մարմնի եւ Ծառայության միջեւ էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման կարգը եւ ձեւաչափը հաստատվում է Կառավարության որոշմամբ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 432-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 4-րդ կետում «գանձման» բառից հետո լրացնել « եւ (կամ) չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի վրա արգելանք կիրառելու» բառերը.

գ. Լրացնել նոր 5-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ.

«5) Եթե հարկ վճարողի չկատարված պարտավորությունների հարկադիր կատարման նպատակով Ծառայության կողմից արգելանք է կիրառվել հարկ վճարողի գույքի նկատմամբ:»,

2) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Չվճարված հարկային պարտավորությունները գանձելու եւ (կամ) չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի վրա արգելանք կիրառելու վերաբերյալ որոշման դատական կամ արտադատական կարգով բողոքարկումը չի կասեցնում դրա կատարումը:»:

Հոդված 8. Օրենսգրքի 434-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենսգրքի 435-րդ հոդվածում՝

1) Վերնագրում եւ 3-րդ մասում «Այլ գույքի» բառերը փոխարինել «Օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի» բառերով:

2) 1-2-րդ եւ 4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնում 2025 թվականի հունվարի 1-ից եւ տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջացած հարկային պարտավորությունների վրա: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը առաջացած հարկային պարտավորությունների նկատմամբ սույն օրենքը կիրառվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում եւ կարգով:

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը առաջացած եւ՝ չկատարված կամ չգանձված հարկային պարտավորությունների ապահովման՝ Օրենսգրքի 398-րդ հոդվածի 5 եւ 6-րդ մասերով սահմանված գանձման եւ (կամ) արգելանքի որոշման կայացման ժամկետը հաշվարկվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 10-րդ օրվանից եւ չկատարված հարկային պարտավորությունների ապահովման եւ հարկադիր կատարման նկատմամբ կիրառվում են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգավորումները:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների մասին

Կ-724-27.11.2023-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթեր՝ հարկային մարմնի կողմից իրականացվող վարչարարության շրջանակներում ինչպես թղթային եղանակով, այնպես էլ էլեկտրոնային համակարգի միջոցով ընդունվող Օրենսգրքով կամ օրենքով նախատեսված փաստաթղթեր, ինչպես նաեւ հարկային ստուգումների եւ ուսումնասիրությունների շրջանակներում հարկային մարմնի կողմից կազմվող՝ Օրենսգրքով նախատեսված փաստաթղթեր (հանձնարարագրեր, ակտերի եւ արձանագրությունների նախագծեր, ակտեր, արձանագրություններ, որոշումներ, հրամաններ).»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել 36.1-ին հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 36.1 Պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի ծանուցումը*

1.Հարկային մարմնի կողմից պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը հարկ վճարողներին ծանուցվում են էլեկտրոնային եղանակով՝ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրման միջոցով, որը հավաստվում է էլեկտրոնային կառավարման համակարգի կողմից: Պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը համարվում են հարկ վճարողին հանձնված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում նշված փաստաթղթերը տեղադրելու օրվանից եւ ուժի մեջ են մտնում հարկ վճարողին հանձնված համարվելու օրվան հաջորդող օրվանից:

2.Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում պարտադիր ծանուցման ենթակա այն փաստաթղթերի նկատմամբ, որոնց ծանուցման հետ կապված հարաբերությունները կարգավորված են Օրենսգրքով:
»:

Հոդված 3. Օրենսգրքի 398-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5. Հարկային մարմնում վարվող՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով չվճարված հարկային պարտավորությունների առաջացման դեպքում, եթե չվճարված հարկային

պարտավորության չափը գերազանցում է 200 հազար դրամը կամ չվճարված հարկային պարտավորության առաջացման օրվանից հետո անցել է երկու ամսից ավելի ժամանակ (բացառությամբ ստուգման կամ այլ վարչական ակտերով հարկային պարտավորություններ առաջադրված լինելու դեպքերի) 200 հազար դրամը գերազանցող պարտավորությունների դեպքում՝ չվճարված պարտավորությունների առաջացման օրը, իսկ մինչեւ 200 հազար դրամ պարտավորությունների դեպքում՝ նշված չվճարված պարտավորության առաջացման օրվանից հետո երկու ամիսը լրանալու օրը հարկ վճարողին չվճարված հարկային պարտավորությունների եւ սույն մասի 2-րդ եւ 3-րդ պարբերություններով սահմանված հարկային մարմնի կողմից իրականացման ենթակա գործողությունների մասին Օրենսգրքով սահմանված կարգով ուղարկվում է հիշեցում եւ առաջարկվում է հիշեցումն ուժի մեջ մտնելուց հետո 7 օրացուցային օրվա ընթացքում իր լսված լինելու իրավունքի ապահովման նպատակով առկայության դեպքում հարկային մարմին ներկայացնել գրավոր առարկություններ:

Սույն մասի 1-ին պարբերությամբ նախատեսված 7 օրացուցային օրվա ժամկետին հաջորդող աշխատանքային օրվանից հետո չկատարված հարկային պարտավորությունը չդադարելու կամ հարկ վճարողի կողմից ներկայացված առարկությունները չընդունելու վերաբերյալ պատճառաբանված եզրակացության կայացման դեպքում հարկային մարմնի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից ընդունվում է չվճարված հարկային պարտավորությունները գանձելու եւ չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ որոշում: Որոշումը կայացման օրը Օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում է հարկ վճարողին: Ներկայացված առարկությունները հարկային մարմնի կողմից ընդունվելու դեպքում վարույթը համարվում է կարճված, ինչի մասին Օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում է հարկ վճարողը:

Սույն մասով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելու օրը ուղարկվում է Հայաստանի Հանրապետության առեւտրային բանկերին, շարժական կամ անշարժ գույքի հաշվառում կամ գույքային իրավունքների գրանցում իրականացնող համապատասխան լիազոր մարմիններին եւ անձանց:

Սույն մասի իմաստով չվճարված հարկային պարտավորությունների առաջացման օր է համարվում Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հարկային պարտավորության կատարման վերջնաժամկետի հաջորդ օրը, եթե այդ օրվա դրությամբ հարկային պարտավորությունը կատարված չէ:»:

2) 5.1-ին մասը ուժը կորցրած ճանաչել.

3) 5.2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5.2. Օրենքով հարկեր վճարելու պարտականություն ունեցող, օրենքով սահմանված հարկային հաշվարկ չներկայացրած եւ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ չունեցող ֆիզիկական անձ հարկ վճարողների չվճարված հարկային պարտավորությունների գանձումն իրականացվում է «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով: Վարույթի շրջանակներում փաստաթղթերը հարկ վճարողներին ծանուցվում են փոստային կապի միջոցով՝ հանձնման մասին ծանուցմամբ հարկային մարմնում առկա տեղեկություններում ժամանակագրական կարգով վերջին հաշվառման հասցեով: Փոստային կապի միջոցով փաստաթղթերը հարկ վճարողին ուղարկելուց

հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, հանձնման մասին հետադարձ ծանուցում չստանալու դեպքում հարկային մարմինը նշված փաստաթղթերի իրազեկումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով, եւ փաստաթղթերն ուժի մեջ են մտնում կայքում տեղադրելու օրվան հաջորդող 5-րդ օրվանից: Չկատարված պարտավորությունները գանձելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հարկային մարմինը Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկում է չկատարված հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:».

4) 6-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված հարկային պարտավորությունները սույն մասով սահմանված ժամկետում չվճարվելու օրվան հաջորդող 7-րդ օրացուցային օրը հարկային մարմնի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից ընդունվում է չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ որոշում: Որոշումը կայացման օրը Օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում է հարկ վճարողին:

Սույն մասով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելու օրը ուղարկվում է Հայաստանի Հանրապետության առեւտրային բանկերին, շարժական կամ անշարժ գույքի հաշվառում կամ գույքային իրավունքների գրանցում իրականացնող համապատասխան լիազոր մարմիններին եւ անձանց»:

Հոդված 4. Օրենսգրքի 429 հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«1. Գույքի արգելանքը չվճարված հարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված՝ հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Գույքի արգելանքը կիրառվում է հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի (այսուհետ՝ սույն բաժնի իմաստով ՝գույք) տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի՝ հարկային պարտավորությունների չափով սահմանափակման միջոցով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենսգրքի 431-րդ հոդվածի

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.Օրենսգրքի 398-րդ հոդվածով սահմանված դեպքերում չվճարված հարկային պարտավորությունները գանձելու եւ (կամ) չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ որոշման մեջ նշվում են որոշում կայացնող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, տարին, ամիսը, ամսաթիվը, հարկ վճարողի անունը, ազգանունը

(ՀԾՀ-ն, անձը հաստատող փաստաթղթի տվյալները), կազմակերպության դեպքում՝ լրիվ անվանումը, հարկ վճարողի ՀՎՀՀ-ն՝ առկայության դեպքում, չկատարված հարկային պարտավորության չափը եւ որոշում կայացնելու իրավական հիմքերը:»:

2) 2-7-րդ մասերը, 8-րդ մասի 2-րդ նախադասությունը, 9-րդ, 10-րդ եւ 12-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

3) 11-րդ մասում «Սույն հոդվածով սահմանված» բառերը փոխարինել «Չվճարված հարկային պարտավորության գումարը 2 միլիոն եւ ավելի կազմելու դեպքում կիրառված » բառերով:

4) Լրացնել 13-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«13.Հարկ վճարողի գույքի վրա արգելանք կիրառելուց հետո 30-օրյա ժամկետում հարկային պարտավորությունները չդադարելու դեպքում հարկային մարմինը չվճարված հարկային պարտավորությունները գանձելու եւ (կամ) չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ որոշումը եւ չկատարված պարտավորության չափի վերաբերյալ տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով ներկայացնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն)՝ չկատարված պարտավորությունները «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով հարկադիր կատարելու նպատակով: Հարկային մարմնի կողմից Ծառայություն է ներկայացվում հարկ վճարողի անունը, ազգանունը (ՀԾՀ-ն, անձը հաստատող փաստաթղթի տվյալները), կազմակերպության դեպքում՝ լրիվ անվանումը, հարկ վճարողի ՀՎՀՀ-ն՝ առկայության դեպքում, արգելադրված գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների չափի կամ դրանց բացակայության վերաբերյալ տեղեկատվություն: Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հարկային մարմնի կողմից կիրառված արգելանքի որոշումը Ծառայություն է ներկայացվում անբողոքարկելի դարձած ստուգման կամ այլ վարչական ակտերի հետ միաժամանակ: Հարկային մարմնի եւ Ծառայության միջեւ էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման կարգը եւ ձեւաչափը հաստատվում է Կառավարության որոշմամբ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 432-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 4-րդ կետում «գանձման» բառից հետո լրացնել « եւ (կամ) չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի վրա արգելանք ~~դնելու~~կիրառելու» բառերը.

գ. Լրացնել նոր 5-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ.

«5) Եթե ~~Հ~~հարկ վճարողի չկատարված պարտավորությունների հարկադիր կատարման նպատակով Ծառայության կողմից արգելանք է կիրառվել հարկ վճարողի գույքի նկատմամբ:»,

2) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Չվճարված հարկային պարտավորությունները գանձելու եւ (կամ) չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի վրա արգելանք ~~դնելու~~ կիրառելու վերաբերյալ որոշման դատական կամ արտադատական կարգով բողոքարկումը չի կասեցնում դրա կատարումը:»:

Հոդված 8. Օրենսգրքի 434-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենսգրքի 435-րդ հոդվածում՝

1) Վերնագրում եւ 3-րդ մասում «Այլ գույքի» բառերը փոխարինել «Օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի» բառերով:

2) 1-2-րդ եւ 4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. ~~***Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ***~~

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնում 2025 թվականի հունվարի 1-ից եւ տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջացած հարկային պարտավորությունների վրա: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը առաջացած հարկային պարտավորությունների նկատմամբ սույն օրենքը կիրառվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում եւ կարգով:

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը առաջացած եւ՝ չկատարված կամ չգանձված հարկային պարտավորությունների ապահովման՝ Օրենսգրքի 398-րդ հոդվածի 5 եւ 6-րդ մասերով սահմանված գանձման եւ (կամ) արգելանքի որոշման կայացման ժամկետը հաշվարկվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 10-րդ օրվանից եւ չկատարված հարկային պարտավորությունների ապահովման եւ հարկադիր կատարման նկատմամբ կիրառվում են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգավորումները:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-724-27.11.2023-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ կառավարություն	**7րդ հոդվածի 1-ին մաս**	1. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող Օրենսգրքի 398-րդ հոդվածում նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ	Ընդունվել է	Ընդունվել է

			նախատեսվում է «արգելանք կիրառելու վերաբերյալ որոշում» կայացնելու հարկային մարմնի լիազորությունը: Սակայն Օրենսգրքի մի շարք հոդվածներում, ինչպես օրինակ 431-րդ հոդվածի 8-րդ մասում օգտագործվում է «արգելանք դնելու մասին որոշում» արտահայտությունը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:» Ելնելով այս պահանջից առաջարկում ենք Նախագծով նախատեսվող և Օրենսգրքում կիրառվող միևնույն միտքը անվանել միևնույն արտահայտությամբ: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք 7-րդ հոդվածի 1-ին մասի «բ.» կետում և 2-րդ մասում «դնելու» բառի փոխարեն լրացնել «կիրառելու» բառը: 2. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող Օրենսգրքի 432-րդ հոդվածի 1-ին մասում նոր լրացվող 5-րդ կետը առաջարկում ենք սկսել «եթե» բառով՝ «Հարկ» բառը դարձնելով փոքրատառ՝ հոդվածի մյուս մասերին համապատասխանեցնելու և նախադասության ճիշտ շարադասությունը պահպանելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	ՀՀ կառավարություն	**10-րդ հոդված**	Նախագծի 10-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Ընդունվել է	Ընդունվել է
«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	ՀՀ կառավարություն	**1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է Օրենքի 1-ին հոդվածը լրացնել նոր 11-րդ պարբերությամբ: Քանի որ Օրենքի 1-ին հոդվածում արդեն իսկ առկա է 11-րդ պարբերություն առաջարկում ենք լրացումը կատարել որպես 12-րդ պարբերություն: Հաշվի առնելով վերոգրյալը «տասնմեկերորդ» բառի փոխարեն լրացնել «տասներկուերորդ» բառը:	Ընդունվել է	Ընդունվել է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	ՀՀ կառավարություն	5-րդ հոդված	1. Նախագծի 5-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»: 2. Հաշվի առնելով, որ նշված օրենքով սահմանված	Ընդունվել է	Ընդունվել է

			կարգավորումների ծրագրային ապահովության աշխատանքները կատարվելու են Համաշխարհային բանկի աջակցությամբ, ինչպես նաև հաշվի առնելով վերջինիս կողմից սահմանված առաջնահերթությունները և Համաշխարհային բանկի պահանջներին համապատասխան կազմվող գնման հայտի և մրցույթի հայտարարման գործընթացի ժամանակատար լինելը, առաջարկում ենք նախագծի 2-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված դրույթների ուժի մեջ մտնելը սահմանել 2026 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով վերոգրյալը 5-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասի 1-ին նախադասության մեջ «հունվարի 1-ից:» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածների:» բառերը, 2) լրացնել նոր 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «3. Սույն օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:» Ըստ այդմ մասերի համարակալումը փոխվել է: գ) 3-րդ (խմբագրված 4-րդ) մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝	Ընդունվել է	Ընդունվել է

			«4. Սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանվող դրույթի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:»		
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ կառավարություն	**2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Ընդունվել է	Ընդունվել է
«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	ՀՀ կառավարություն	**2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Ընդունվել է	Ընդունվել է
«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					

1.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «գ» կետ: Սակայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասում արդեն իսկ առկա է «գ» կետ: Ուստի առաջարկում ենք լրացումը նախատեսել որպես նոր «զ»կետ:	Ընդունվել է	Ընդունվել է
<u>Օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման արդյունքում լրացվել են նոր նախագծերով</u>					
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ	Հաշվի առնելով, որ ներկայացված փաթեթով համապատասխան հստակեցումներ են կատարվում հարկային պարտավորությունների հաշվառման մասով, ինչպես նաև համապատասխան կարգավորումներ են սահմանվում հարկային պարտավորությունների կատարումն ապահովող արգելադրման արդյունավետ գործիքակազմի կիրառման համար, և որն անմիջականորեն առնչվում է հարկային պարտավորությունների հաշվառման նոր համակարգի ներդրմանը, առաջարկվում է հարկային պարտավորությունների հաշվառման նոր համակարգի ներդրումը մեկ ամբողջական գործընթացով ապահովելու համար 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-	Ընդունվել է	Ընդունվել է

		կատարելու մասին»	101-Ն օրենքով սահմանված՝ ուժի մեջ մտնելու ժամկետները սահմանել 2025 թվականի հունվարի 1-ը՝ 2024 թվականի հուլիսի 1-ի փոխարեն: Նախագծերին կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-101-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է 28-րդ հոդվածում «2024 թվականի հուլիսի 1-ից» բառերը փոխարինել «2025 թվականի հունվարի 1-ից» բառերով: Ուժի մեջ մտնելու ժամկետի փոփոխությամբ պայմանավորված առաջարկվում է փոփոխություն կատարել նաև օրենքի 27-րդ հոդվածում՝ ժամկետները համապատասխանեցնելով ուժի մեջ մտնելու ժամկետի հետ: Միաժամանակ, միասնական հաշվարկներով առաջացող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների ռիսկային համարելու նպատակով Կառավարությանը ռիսկային չափանիշների սահմանման լիազորությունների վերապահման մասով առաջարկվում է օրենքում կատարել փոփոխություն Կառավարության կողմից ռիսկային չափանիշների սահմանման մասով հաշվի առնելով նաև օրենսգրքով սահմանված հարկային հսկողության իրականացման համար կիրառվող ռիսկերի կառավարման համակարգը:		

			Այդ նպատակով առաջարկվում է օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով՝ օրենսգրքի 74-րդ հոդվածում լրացվող 4-րդ մասի առաջին նախադասությունում «չափանիշներին» բառը փոխարինել «չափանիշներին, այդ թվում՝ հարկային հսկողության իրականացման համար կիրառվող ռիսկերի կառավարման համակարգով, (այսուհետ՝ Կառավարության սահմանած չափանիշներ)» բառերով: Հաշվի առնելով վերոգրյալը փաթեթը լրացվել է նոր նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ. **«ՆԱԽԱԳԻԾ** **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** **ՕՐԵՆՔԸ** **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** **ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ** **ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ** **ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի** **ՀՕ-101-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ** **ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**		

			Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-101-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լրացվող՝ օրենսգրքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասությունում «չափանիշներին» բառը փոխարինել «չափանիշներին, այդ թվում՝ հարկային հսկողության իրականացման համար կիրառվող ռիսկերի կառավարման համակարգով, (այսուհետ՝ Կառավարության սահմանած չափանիշներ)» բառերով: **Հոդված 2.** Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1) 1-ին կետում «2024 թվականի հուլիսի 1-ը» բառերը փոխարինել «2025 թվականի հունվարի 1-ը» բառերով, 2) 2-րդ կետում «2024 թվականի հուլիսի 1-ը» բառերը փոխարինել «2025 թվականի հունվարի 1-ը»		

			բառերով, «2024 թվականի հուլիսի 1-ից» բառերը՝ «2025 թվականի հունվարի 1-ից» բառերով, իսկ «հունիսի 30-ի դրությամբ» բառերը՝ «դեկտեմբերի 31-ի դրությամբ» բառերով: **Հոդված 3.** Օրենքի 28-րդ հոդվածում «2024 թվականի հուլիսի 1-ից» բառերը փոխարինել «2025 թվականի հունվարի 1-ից» բառերով: **Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:»		
«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ կառավարություն	Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատար	Հաշվի առնելով, որ ներկայացված փաթեթով համապատասխան հստակեցումներ են կատարվում հարկային պարտավորությունների հաշվառման մասով, ինչպես նաև համապատասխան կարգավորումների են սահմանվում հարկային պարտավորությունների կատարումն ապահովող արգելադրման արդյունավետ գործիքակազմի կիրառման համար, և որն անմիջականորեն առնչվում է հարկային պարտավորությունների հաշվառման նոր համակարգի ներդրմանը, առաջարկվում է հարկային պարտավորությունների հաշվառման նոր համակարգի ներդրումը մեկ ամբողջական գործընթացով	**Ընդունվել է**	Ընդունվել է

		ելու մասին» օրենքի նախագիծ	ապահովելու համար 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-102-Ն օրենքով սահմանված՝ ուժի մեջ մտնելու ժամկետները սահմանել 2025 թվականի հունվարի 1-ը՝ 2024 թվականի հուլիսի 1-ի փոխարեն: Առաջարկում ենք «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-102-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի 3-րդ հոդվածում «2024 թվականի հուլիսի 1-ից» բառերը փոխարինելով «2025 թվականի հունվարի 1-ից» բառերով: Հաշվի առնելով վերոգրյալը փաթեթը լրացվել է նոր նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ. «ՆԱԽԱԳԻԾ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** **ՕՐԵՆՔԸ** **«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ»** **ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ** **ՄԱՍԻՆ» 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի ՀՕ-102-Ն**		

			ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **Հոդված 1.** «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-102-Ն օրենքի 3-րդ հոդվածում «2024 թվականի հուլիսի 1-ից» բառերը փոխարինել «2025 թվականի հունվարի 1-ից» բառերով: **Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:»		